# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԲԸԱՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում, ստորև ներկայացնում է 965 ծածկագրով ԲԸԱՀ ընթացակարգի արդյունքում 2013թ-ի մայիսի 6-ին կնքված և սեղանամատյանում թիվ 965 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում 2016թ-ի մարտի 4-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

<u>Փոփոխության պատճառ:</u> Գնման պահանջ

Փոփոխության նկարագրություն: Կնքվել է լրացուցիչ համաձայնագիր՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց հաստատելու մասին:

<u>Փոփոխության հիմնավորում</u>: ՀՀ կառավարության 24/12/2015թ. թիվ 1555-Ն որոշում

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ռուզաննա Գաբրիելյանին:

Հեռախոս՝ 011800118

Էլ փոստ՝ruzanna_gabrielyan@minfin.am

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 3

06.05.2013թ. կնքած և սեղանամատյանում թիվ 965 համարով գրանցված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ՀՀ, քաղաք Գորիս «04» մարտի 2016թ.

**«Արդշինբանկ»** ՓԲԸ, այսուհետ՝ **«Վարձատու»**, ի դեմս Տիգրան Ալեքսանդրի Բարխուդարյանի (ՀՀ քաղաքացու անձնագիր AN0217121, տրված 032-ի կողմից 27.07.2012 թվականին, հաշվառման հասցեն. ք. Գորիս, Գ.Նժդեհի փ., տ. 43),ով գործում է 01.03.2016 թվականին տրված թիվ 660-1933 լիազորագրի հիման վրա, մի կողմից, և **ՀՀ ֆինանսների նախարարությունը**, այսուհետ՝ **«Վարձակալ»**, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով միմյանց միջև 06.05.2013 թվականին կնքված, սեղանամատյանում թիվ 965-ով գրանցված, ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 40-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը փոխադարձ համաձայնության են գալիս.

1) Հաստատել Պայմանագրով սահմանված վարձավճարի վճարման նպատակով 2016 թվականի բյուջետային միջոցների հաշվին ֆինանսավորման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի,

2) Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածել Կողմերի միջև 2016 թվականի հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. 06.05.2013 թվականին կնքված և սեղանամատյանում թիվ 965 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում նշված մնացած կետերը մնում են անփոփոխ:

3. Սույն համաձայնագիրը կնքված է հայերենով, երկու /2/ հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ մեկական օրինակ Կողմերից յուրաքանչյուրի համար:

4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

5. Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

6. Կողմերի վավերապայմաններն ու ստորագրությունները.

| «ՎԱՐՁԱՏՈՒ» | «ՎԱՐՁԱԿԱԼ» |
|---|---|
| «Արդշինբանկ» ՓԲԸ | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ |
| ք.Երևան, Գր. Լուսավորիչի փող.13 | ք.Երևան, Մ. Ադամյան 1 |
| ՀՎՀՀ 02566492 | ՀՎՀՀ 02629081 |
| հ/հ 2470036863310000 | Հ/Հ 900281000084 |
| «Գորիս» մասնաճյուղի կառավարիչ՝ | Կենտրոնական գանձապետարան գործառնական վարչություն |
| _____ Տ. Բարխուդարյան | Ղեկավար՝ _____ Ա.Արզումանյան |

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ «ARDSHINBANK» CJSC 02566492 10163

Հավելված 1
06.05.2013թ կնքված և սեղանամատյանում թիվ 965
համարով գրանցված ոչ բնակելի տարածքի վարձակալության
պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 3 համաձայնագրի

## 2016 թվականի բյուջետային միջոցների հաշվին ինանսավորման ժամանակացույց*

հազար դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | դեկտեմբեր | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Գորիս քաղաքի Գր. Տաթևացի 9 հասցեում գտնվող վարչական շենքի երկրորդ հարկից 472.3 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի վարձակալության ծառայություն | 566.80 | 566.80 | 1133.50 | 1133.50 | 1133.50 | 1700.00 | 1700.00 | 1700.00 | 2267.04 | 2267.04 | 2267.04 | 2267.04 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

«ՎԱՐՁԱՏՈՒ»

«Արդշինբանկ» ՓԲԸ

Ք.Երևան, Գր. Լուսավորիչի փող.13

« Գորիս» մասնաճյուղ

Ք.Գորիս Գր. Տաթևացի 9

ՀՎՀՀ 02566492

h/h 2470036863310000

( ստորագրություն)

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
«ARDSHINBANK» CJSC
02566492 10163

«ՎԱՐՁԱԿԱԼ»

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ

ք.Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900281000084
Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն

Ղեկավար

Ա.Արզումանյան
( ստորագրություն)